

905

51  
U-42

1931

G. MAY 2010

51:374.4  
Ա-42

L. U. N. Z.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՅԵՒ

Ժ. Տ. Գ. 57 JUN 2005

Հ

## ԿԱԴՐԵՐԻ ՍԵԿՏՈՐ

### ՀԵՌԱԿԱ. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԶԱ

ԲՆԴՈՒԽԾՐԻԱԼ ՀԵՌԱԿԱ. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Կազմեց՝ Վ. Ա. ԲՈՂՋԱՆ

Ա.Թ.Ա.Զ.Գ.ՐՈՒԹՅՈՒՆ Հ 1

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Ա.Թ.Ա.Զ.Գ.ՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐՈՒ. Ա.



4 FEB 2013

905

01-01-1  
0-12

ԱՅ

130

## ՍԱԹԵՄԱՏԻԿԱ ԲՐԻԳԱԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

31504

Զափերի մետրական սիստեմ, Տասնորդական կոտորակներ, Նրանց գումարումը, հանումը, բազմապատկումն ու բաժանումը:

Ցուցմունք.—այս առաջադրությունը կատարելու համար պետք է ունենանք հետեւյալ անհրաժեշտ պարագանները. սրածարը մատիս, կարկին (ցիրկուլ), դեցիմնետրերի, սանտիմետրերի և միլիմետրերի բաժանված քանոն ու անկյունաչափ գործիք:

Առաջադրությունը կարդում էք սկզբից՝ մաս առ մաս, ձեռքի տակ պիտի ունենաք նաև տեսք: Հենց, վոր հասնեք այնպիսի կետի, վորտեղ ձեզ առաջարկվում է վորոշ ոշխատանք կատարել անմիջապես կատարում էք տեսրի մեջ (թանաքով կամ մատիտով մաքուր ու պարզ) առաջադրության մեջ նշված յեղանակով: Բացատրական մասը պետք է կարդաք առնվազն յերեք անգամ, վորպեսզի ճիշտ և մանրամասն հասկանաք, թե չե կատարած աշխատանքը կամ լուծած խնդիրը սխալ կլինի: Միանգամ ընդ միշտ խմացեք. մաթեմատիկայից վորեւ աշխատանք կատարելու կամ խնդիրը լուծելու համար պետք են շատ լավ իմանալ տեսությունը: Կարիք չկա նախ սեազգել հետո արտադրել պետք և սովորել աշխատանքը մաքուր կատարել: Դրա համար ել արված աշխատանքը կատարում էք անմիջապես մաքուր տեսրի մեջ, բայց կարող եք ունենալ նաև վորեւ թղթի կտոր, վորպեսզի նրա վրա կատարեք ձեզ համար դժվար կամ կասկածելի վորեւ գործողություն ու անմիջապես, ստուգելուց հետո արտադրեք տեսրի մեջ և շարունակեք կատարել հաջորդ աշխատանքը:

#### 1. Զափերի մետրական սիստեմ

Խորհրդավին կառավարությունը 1918 թվի սեպտեմբերի 14-ին դեկտեմբերի կարգադրեց, — դուրս մղել գործածությունից ուստական հին չափերը և կյանքի մեջ կիրառել մետրական կամ տասնորդական սիստեմի չափերը: Այդ ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ կատարելուց հետո 1927 թվի մայիսի 29-ին նոր դոկտորով մետրական չափերը գործածության մեջ մտցնելու վերջնական ժամկետ նշանակվել 1927 թվի հունվարի 1-ը: Այդ որվանից ԽՍՀՄ-ի սահմաններում գործածական դարձան մետրական չափերը: Այդ չափերը ծագումն են առել սրանից 140 տորի առաջ, գործածության մեջ հեղափոխության ժամանակ: Մինչ այդ վոչ միայն դա-

Դրառեպար № 6480 (ը)

Գաղտներ № 2517

Տիրամ 500

Պետրապիտ տպարան, Յերեան



հազան յերկրների, այլև միւնուքն յերկրի դասազան նահանգներում միմյանցից տարբեր չափեր ելին գործածվում: Հին չափերը ընությունից չելին վերցրած այլ պատահական բնույթի եյին կրում և իրենց բարդությամբ մեծ գժվարություններ եյին առաջացնում թե նույն յերկրի, և թե տարբեր յերկրների ժողովուրդների միջև:

Ֆրանսիացի մի շաբք գիտնականներ վորոշեցին վորպես յերկարության չափի միավոր ընդունել Փարիզի (Ֆրանսիայի մայրաքաղաքն ե) վրայով անցնող միջորեականի՝) մեկ քառասուն միլիոններորդական մասը և այդ միավորն անվանեցին մետր, վորը հունարեն բառ և և նշանակում է «չտփ»: Մետրի ընտրությունը կատարեցին այսպիս. նախ չափեցին Փարիզի վրայով անցնող միջորեականի յերկարությունը, ապա բաժանեցին 4 մասի և հետո մեկ չորորդ մասը նորից բաժանեցին 10,000,000 մասի, այդպիսով մետրը հավասար լեզավ ամբողջ միջորեականի մեկ քառասունմիլիոններորդ մասին: Չափերի միջազգային բարոն 1799 թվին պլատինի և իրդդիա թանկագին մետաղների ձուլվածքից պատրաստեց հիմնական մետրի որինակը և միանգամայն ամուր լինելու հարար նրան տվեց սելսի ձեւ, վորի բնական մեկ տասկերորդ մասը այսպես եւ:

Մետրական սիստեմի չափերը նախկին ոռուսական չափերի նկատմամբ հետեւյալ առավելություններն ունեն:

1. Մետրական սիստեմի չափերը միջազգային են:

2. Մետրական սիստեմի չափերը վերցրած են բնությունից և բոլորը հիմնվում են մետրի վրա:

3. Մետրական սիստեմի չափերը տասնորդական սիստեմ ունեն՝ այսպիսն մեկ՝ միւսից մեծ կամ փոքր և տասն անգամ:

Այսպես մետրական սիստեմի չափերի մեջ ամենամեծ չափը կելում առըն ե և

- 1 կիլոմետրը 10 անգամ մեծ և 1 հեկտոմետրից,
- 1 հեկտոմետրը » » » 1 դեկամետրից,
- 1 դեկամետրը » » » 1 մետրից
- 1 մետր » » » 1 դիցիմետրից,
- 1 դիցիմետրը » » » 1 սանտիմետրից,
- 1 սանտիմետրը » » » 1 միլիմետրից:

Մետրական յերկարուրյան չափեր

$Մետր = 10 դիցիմետրի:$

$Դիցիմետր = 10 սանտիմետրի:$

$Սանտիմետրը = 10 միլիմետրի:$

$10 մետրը = մեկ դեկամետրի:$

$10 դեկամետրը = մեկ հեկտոմետրի:$

$10 հեկտոմետրը = մեկ կիլոմետրի:$

$Կիլոմետրը = ե 1000 մետրի:$

$Մետրը = 100 սանտիմետրի:$

<sup>\*)</sup> Միջորեականները մտավոր կերպով յերկրագնդի հյուսվածք դեղի հարավ լիվիունից անցկացրած գծեր ան, վորոնցով ամբողջ յերկրագունդը բաժանվում է մասերի: Այդ գծերի և հասարակածին զուգահեռ անցկացրած գծերի միջոցով դանում են տվյալ քաղաքամասը վայրի տեղը յերկրագնդի քարտեսի վրա, ամեն մի վայր ունի իրեն վրայով անցուղ միջորեականը: Գիտակոր միջորեականը ընդունել են Փարիզինը նրա ու հասարակածի միջոցով կատարում են բոլոր հաշվումները:

Մետրական չափերով կատարված հաշիվները զրանցելիս ընդունված է զործածել հետեւյալ կրճատ նշանակումները, վորոնք այդ չափերի միջազգային անունների սկզբնատառերն են:

Այսպիս՝ մետրը բառի փոխարեն գրում են ո.

սանտիմետր » . . . » . . . cm.

միլիմետր » . . . » . . . mm.

դեկամետր » . . . » . . . dm.

հեկտոմետր » . . . » . . . hm.

կիլոմետր » . . . » . . . km.

Դ ի ց ի մ ե ս ր

Բաժանված սանտիմետրերի յեկ միլիմետրերի:

Զեր տեսրի մեջ գծեցեք.

ա) Մի ուղղղ գիծ, վորը հավասար լիմի 4 սմ-ո և 5 սմ-ի գումարին:

բ) » » » » » 5 սմ-ի և 8 մմ. »

գ) » » » » » 13 սմ-ի:

դ) » » » » » 7 սմ-ի և 4 սմ-ի գումարին:

ե) » » » » » 2 անգամ մեծ լինի 3 սմ-ից:

զ) » » » » » 2 սմ-ից:

հ) » » » » » 12 սմ-ից:

Գծագրումը պետք է կատարեք քանոնի և սրածայր մատիտի ոգնությամբ ու տակն եւ զրեք, թե վորքան և ձեր գծածի յերկարությունը:

Իմացեք ձեր կառուցումների ժամանակ մետրական չափերից վորո՞նք ին զործածվում և զրեցեք ձեր տեսրում:

Չափեցեք ձեր շենքերի լայնությունը, սովորական տուֆից շինած պատերի լայնությունը, և արթիկ տուֆից շինած պատերի լայնությունը ու գրեցեք ձեր տեսրում:

Գրանցումը կատարում եք այսպիս. նախ չափում եք, արդյունքները նշանակում եք թղթի վրա, ստուգում եք ու գրանցում այս աղյուսակի մեջ:

Հիմքի լայնությունը	Սովորական տուֆից շինած պատի լայնությունը	Արթիկ տուֆից շինած պատի լայնությունը

Ռուկա գործածում եք. ուսումնասիրեք ձեր ունեցած ռուկերը իմացեք քանի մետր և, և զրի առեք տեսրերում:

Մետրական սիստեմի ծանրուրյան չափեր

Մետրական սիստեմով ծանրություն չափելու համար վորպես ծանրության միավոր ընդունված է մի խորանարդ սանտիմետր Ցեմիուսի ջերմա-

չափով 4° -ի թորած ջրի քաշը: Այդ քաշը կոչվում է գրամ, վորը հունարեն  
բառ և նշանակում է «քաշ»:

Աստեղ ել լուրաքանչուր բարձր չափի միավոր 10 անդամ մեծ և ի-  
րենից փոքր չափից, ալսպես:

- 1 Գրամը, վորը նշանակվում է  $g=10$  դիցիորամի (deg):
- 1 դիցիորամը » »  $deg=10$  սանտիորամի (sg):
- 1 սանտիորամ. » »  $eg=10$  միլիորամի (mg):
- 1 կիլոգրամը » »  $kg=1000$  գրամի (gr):
- 1 տոնը » »  $t=1000$  կիլոգրամի (kg):

Աւշադրություն գարձրելով մեզնում գործածվող դրամական չափերի  
վրա, տեսնում եք, վոր այդ չափերն ել համարյա կազմված են տասնորդա-  
կան սիստեմով:

- Այսպես. 1 սուրլին=10 հատ տաս կոպեկանոցի,  
1 հատ տաս կոպեկանոցը=10 կոպեկի  
1 հատ չերվոնեցը=10 սուրլու և ալլը:

Մետրական չափերի վերածումը յել անդրադասում:

Մետրական սիստեմի չափերի վերածումն ու անդրադարձումը չափա-  
պանց հեշտ ե: Վերտծնի չափերը, նշանակում ե մեծ չափերն արտահայտել  
փոքր չափերով: Որինակ.

2 չերվոնեցը, 5 սուրլիանոցը, 4 հատ տաս կոպեկանոցը և 7 կոպեկը  
վերածել նշանակում ե այդ բոլորը արտահայտել կոպեկներով. վարված ենք  
այսպես:

- 1) 1 չերվոնեցը=10 սուրլու
- 2)  $20 \text{ n.} + 5 \text{ n.}=25 \text{ n.}$
- 2 չերվոնեցը=10 ն.  $2=20 \text{ n.}$
- 3) 1 ն. =10 հատ տաս կոպեկանոցի  
 $25 \text{ n.}=10 \text{ m. l. } 25=250 \text{ m. l.}$
- 5) 1 տաս կոպեկանոցը=10 կ.  
 $259 \text{ տաս } k.=10 \text{ k. } 259=2590$
- 6)  $2590 \text{ k.} + 7 \text{ k.}=2597 \text{ k.}$

Նմանապես 7 մետրը, 5 դիցիորը և 9 սանտիմետրը սանտիմետրե-  
րի վերածում ենք այսպես.

- 1)  $1 \text{ m}=10 \text{ dem. l}$
- 2)  $70 \text{ dc}+5 \text{ dc}=75 \text{ dc.}$
- 7 մ.=10 դէ~~ւ~~=70 դէ.
- 3)  $1 \text{ dc}=10 \text{ cm.} \sim \text{l}$
- 75 դէ=10 սմ.  $75=750 \text{ սմ.}$
- 4)  $750 \text{ cm}+9 \text{ cm}=759 \text{ cm. ուրեմն}$
- 7 մ., 5 դէ., 9 սմ.=759 սմ.~ $\text{l}$ :

Վերածել սանիտերերի

- 1 7 դմ., 8 սմ.,
- 2 4 մ., 3 դէ., 6 սմ.,
- 3 2 կմ., 3 մ., 7 դմ. 2 սմ.,
- 4 3 կմ., 8 դմ.,
- 5 10 կգ., 12 դէ. 8 գր. քանի միլիորամ ե:

Վերածել միլիորամերի

- 1) 4 դմ., 5 սմ., 2 մմ.:
- 2) 6 մ., 9 սմ., 1 մմ.:
- 3) 8 մ., 4 դմ., 6 մմ.:
- 4) 8 դմ., 8 սմ., 8 մմ.:

Վերածել գրամների

- 1)  $15 \text{ deg.}, 8 \text{ gr.}$
- 2) 8 կգ., 4 հց., 8 դկգ.:
- 3) 8 կգ., 5 դկգ., 7. գր.:

Անդրադասում

Անդրադարձնել նշանակում ե փոքր չափերն արտահայտել մեծ չա-  
փերով: Որինակ.

Անդրադարձնել 4328 կոպեկը, նշանակուծ ե այդ դրամն արտահայտել  
չերվոնեցների և ընդհանրապես մեծ միավորների միջոցով այսպես.

Նախ արտահայտում ենք 10 կոպեկանոցներով.  
Կիրնի 4328:  $10=432$  տաս. կոպեկանոցի և 8 կոպեկի.  
Այսուհետև 432:  $10=43$  սուրլի և 2 տաս կոպեկանոցի.  
Վերջապես 43:  $10=4$  չերվոնեցի և 3 սուրլի. ուրեմն 4328 կ. = 4 չե-  
րվոնեցի 3 սուրլու, 2 տաս. կ.: 8 կ.:

Նմանապես 678 սմ.-ը անդրադարձնելիս:  
ա)  $678 \text{ cm}:10=67$  դմ և 8 սմ.

- բ)  $67 \text{ dem}:10=6 \text{ m. } 7 \text{ dem.}, \text{ այսինքը}$   
 $678 \text{ cm}=6 \text{ m. } 7 \text{ dem.}, 8 \text{ սմ.}$

1) Անդրադարցնել 3483 մմ-ը:

- 2) » 7822 մց-ը:
- 3) » 8033 մմ-ը:
- 4) » 9041 սմ-ը:
- 5) » 8762 գր-ը:

ՏԱՄՆԱԲԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

Հաճախ չափումներ և հաշվումներ կատարելիս հարմար ե լինում փոքր  
չափերն արտահայտել մեծ չափերով ու նրանց մասերով, որինակ՝

1)  $250 \text{ կոպեկի փոխարեն ասում ենք՝ 2 \text{ ամբողջ } հիսուն հարյուրերորդ$   
սուրլի:

2)  $75 \text{ կոպեկի փոխարեն ասում ենք՝ 0 \text{ ամբողջ } 75 \text{ հարյուր յերորդ}$   
սուրլի:

3)  $5 \text{ ս. } 15 \text{ կոպեկին ասում ենք՝ 5 \text{ ամբողջ, } 15 \text{ հարյուրերորդ } սուրլի:$

4)  $2 \text{ մ. } 4 \text{ դմ-ին ասում ենք՝ 2 \text{ ամբողջ, } 4 \text{ տասերորդ } մետր:$

5)  $16 \text{ սմ. } 7 \text{ մմ-ին ասում ենք՝ } 16 \text{ ամբողջ, } 7 \text{ տասերորդ } սմ.$

Իբտածում ենք այսպես, յենթազրենք պահանջվում ե 6 դմ-ն արտա-  
հայտել մետրերով:

Յեթե 10 գեցիմետրը = 1 մետրի

1 գեցիմետրը = կմինի մետրի մեկ տասնորդ մասին, վորը գըւրում էնք 0,1:

Այստեղ զրոն գրվում, վորովհու ամբողջ մետր չունենք:

Ստորակետը գրվում ե, վորպեսզի ամբողջները բաժանի կոտորակային մասերից:

Ստորակետից հետո գրված 1-ը ցուց ե տալիս, վոր ունենք մետրի տասը մասից միայն մեկ մասը:

0,1 թիվը կարդում էնք՝ զրո ամբողջ մեկ տասերորդ:

Այսուհետև մտածում էնք՝

Յեթե 1 մ. = 0,1 մ.-ի, ապա 6 գեցիմետրը նրանից վեց անգամ մեծ կլինի, այսինքը 6 մ. -ի, կարդում էնք զրո ամբողջ վեց տասերորդ մետր:

Նույնպիսի դատողությամբ կարող ենք գրել.

8 սմ. = 0,8 մ. (զրոամբողջ, ութ տասերորդ):

15 մ. = 1,5 մ. (մեկ ամբողջ, հինգ տասերորդ):

37 սմ. = 3,7 մ. (ինըք ամբողջ, յոթ տասերորդ):

63 սմ. = 0,63 մ.-ի (զրո ամբողջ, վաթսուն յերեք հարյուրերորդ):

25 մ. = 2,5 մ.-ի (ինըկու ամբողջ, հինգ տասերորդ):

138 մ. = 0,238 կլմ.-ի (0 ամբողջ, 128 հազարերորդական):

568 մ. = 0,568 կլմ.-ի (0 ամբողջ, 568 հազարերորդական):

Նույն ձևով էնք կարդում հետեւյալ կոտորակները.

12,7-ը՝ տասներկու ամբողջ, յոթ տասերորդ:

5,25-ը՝ հինգ ամբողջ, քսանհինգ հարյուրերորդական:

0,896-ը՝ զրո ամբողջ, 886 հազարերորդական:

135,48-ը՝ 135 ամբողջ, 48 հարյուրերորդական:

5,7346-ը՝ 5 ամբողջ, 7346 տասնազարերորդական:

0,015-ը՝ 0 ամբողջ 15 հազարերորդական:

7,0036-ը՝ 7 ամբողջ, 36 տասնազարերորդական:

0,50-ը՝ 0 ամբողջ, 50 հարյուրերորդական:

82,041500-ը՝ 82 ամբողջ՝ 415 միլիոներորդական:

Կարդալով վերևում գրված տասնորդական կոտորակները, տեսնում եք, վոր

ա) Ստորակետը բաժանում ե ամբողջները կոտորակային մասերից:

բ) Ստորակետից զեպի ձախ գրվում են ամբողջները:

շ) Ստորակետից զեպի աջ գրվում են կոտորակային մասերը:

դ) Ստորակետից զեպի ձախ անմիջապես լին տեղում միավորներն են Ա-րդ տեղում տասնազարները, Ա-րդ տեղում հարյուրավորները և այլն, իսկ զեպի, աջ անմիջապես հետո լին տեղում գրվում են տասնորդական մասերը, Ա-րդ տեղում հարյուրերորդական մասերը, Ա-րդ տեղում հազարերորդական մասերը և այլն:

ե) Յուրաքանչյուր կարգ իրենից հետո գրված կարգից մեծ և 10 անգամ, զրա համար ել այդ կոտորակները կոչվում են տասնորդական կոտորակներ:

զ) Յեթե տասնորդական կոտորակների մեջ տասնորդական, հարյուր-

յուրդական, հազարերորդական և այլ մասեր չկան, նրանց փոխարեն զրոյի գրվում, որընակ 4,03 կոտորակի մեջ տասնորդական մասեր չկան, զրահամար ել ստորակետից հետո լին տեղում տասնորդական մասերի փոխարեն գրված և զրո, վորը ցուց ե տալիս թե տասնորդական մասեր չկան, կարգում ենք 4 ամբողջ, 3 հարյուրերորդական:

Նմանապես 15,0025 կոտորակի մեջ բացակայում են տասնորդական և հարյուրերորդական մասերը, ուստի նրանց փոխարեն գրված են զրոներ և այլն:

Կարգացեք հետեւյալ տասնորդական կոտորակները և բառերով գրեցեք ձեր տեսքերում:

4,6; 7,2; 0,9; 0,5; 0,83; 43,7; 8,88; 94,41; 102,04; 0,734; 20,02; 3,065; 0,0063; 44,044; 63,0202; 0,0009; 0,000305;

Գրում եք տեսքերում այսպես:

0,83 = 0 ամբողջ 83 հարյուրերորդականի:

Գրեցեք տեսքերում հետեւյալ տասնորդական կոտորակները:

Մեկ ամբողջ, չորս տասնորդական, զրո ամբողջ, քառասուն յերկու հազարերորդական, զրո ամբողջ քառասուն յերկու հարյուրհազարերորդական, հինգ ամբողջ վաթուն չորս միլիոներորդական, տասն և մեկ ամբողջ, ինը հարյուր լոթանասուն վեց միլիոներորդական, զրո ամբողջ ութ հազարերորդական, վեց ամբողջ հարյուր յերեսունյոթ հազար տասներկու միլիոներորդական:

Ցուցմունք. — Տեսքերում գրանցումն այսպես եք կատարում.

Զրո ամբողջ հինգ հարյուր լոթանասուն վեց տասն հազարերորդականը = 0,0576:

Ութ ամբողջ, քսանհինգ հարյուրերորդականը = 8,25:

Հարյուրական	Հարյուրական	Տասնական	Միական	Հարյուրական	Հարյուրական	Հարյուրական	Տասնական	Հարյուրական

Այսպիսի աղլուսակ կազմեցեք և նրա մեջ գրեցեք իբենց տեղերում հետեւյալ կոտորակները:

256,75; 0,465; 5768,0036; 3,786410; 407,00403; 5900,400315; 0,003; 1,47; 0,0009:

Հանգույթի մակարդակը	Համարված առաջնային մակարդակը	Միավոր	Ստորական մակարդակը	Տառաշրջաբական մակարդակը	Համարված առաջնային մակարդակը	Տառաշրջաբական մակարդակը	Համարված առաջնային մակարդակը	Միավոր
5	1	6	,	0	3	4	0	1
		2	,	0	0	3		

ՏԱՄՆԱՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տասնորդական կոտորակները մեծացնել 10, 100, 1000, 10000 և այլ անգամ:

Լուծենք մի խնդիր.

Մի կոտոր պարանի լերի արությունն է 8 տ., 5 սմ., 4 տտ.: Ելաբարդ անվանական թիվը արտահայտենք նաև միայն մետրերով, հետո դեցիմետրերով, ապա սանտիմետրերով և միլիմետրերով:

4 տտ.=0,004 տ., 5 սմ.=0,05 տ. ունենք նաև 8 տ., կիրակ

8 տ., 5 սմ., 4 տտ.=8,054 տ. կամ

8 տ., 5 սմ., 4 տտ.=80,54 տտ. կամ

8 տ., 5 սմ., 4 տտ.=805,4 տ. կամ

5 տ., 5 սմ., 4 տտ.=805,4 տ.:

Առաջին դեպքում լերկարության միավորը մետրն է,

լերկարդ » » » դեցիմետրն է,

յերորդ » » » սանտիմետրն է,

չորրորդ » » » միլիմետրն է:

Ուրեմն լերկարության միավորը առաջատաս անգամ փոքրանում է, սակայն մլուս կողմից 8,054-ը, վորպես թիվ, առաջատաս անգամ մեծանում է, վորի ժամանակ ստորակետը մի-մի թվանշան փոխադրվում է ձախից դեպի աջ:

Այսպիսով տասնորդական կոտորակները 10 անգամ մեծացնելու համար ստորակետը մեկ թվանշան ձախից դեպի աջ պիտի տանել, 100 անգամ մեծացնելիս ստորակետը պիտի լերկու թվանշան դեպի աջ շարժել, 1000 անգամ մեծացնելիս՝ լերեք թվանշան, 10000 անգամ մեծացնելիս՝ չորս թվանշան և այլն:

Չեր տետրերում զրեցեք հետեւալը.

0,3-ը քանի անգամ է մեծ 0,03-ից, 0,3 լ քանի անգամ է մեծ 0,003 լից, 0,3-ը քանի անգամ է մեծ 0,0003-ից: 0,04-ը քանի անգամ է մեծ 0,0004 լից:

Գրալոր պատասխանեք, քանի անգամ կմեծանա առանորդական կոտորակը, ինթե ստորակետը դեպի աջ շարժենք՝ մեկ թվանշան, յերկու թվանշան, յերեք թվանշան, չորս թվանշան, հինգ թվանշան և այլն:

9,4796 կոտորակը մեծացնել համար 10 անգամ, հետո 100 անգ., 1000 անգամ, 10000 անգամ, 100000 անգամ:

9,4706 կոտորակի ստորակետը դեպի աջ մեկ թվանշան շարժելով, 9-ը միավորը դառնում է 90, 4 տասնորդականը դառնում է 4 ամբողջ, 7 հարյուրերորդականը դառնում է 7 տասնորդական, 9 հազարերորդականը դառնում է 9 հազարերորդական, 6 տասնազարերորդականը դառնում է 6 հազարերորդական, վորով յուրաքանչյուր թվանշան տաս անգամ մեծանում է:

Իմացեք, թե քանի՞ անգամ կմեծանա յուրաքանչյուր թվանշան, յեթե տասնորդական կոտորակի ստորակետը շարժենք դեպի աջ 2, 3, 4, 5 թվանշան:

Հետևալ կոտորակները մեծացրեք 10 անգամ և գրեցեք տետրերում: 5,6: 61,31 0,49: 1,0054: 0,0003: 200,48: 0,0643: 85,602: 40,0041: Մեծացնել 100 անգամ 0,0305: 0,009: 0,26: 0,6: 8,00003: 0,0001-ը մեծացնել 1000 անգամ: 5,00094: 23,8: 0,1: 2,536-ը մեծացնել 10000 անրամ:

Տասնորդական կոտորակները փոքրացնել 10, 100, 1000, 10000 և այլ անգամ:

8473,25 տասնորդական կոտորակի ստորակետը դեպի ձախ փոխազբեցիք 1 թվանշան, 2 թվանշան, 3 թվանշան, 4 թվանշան, 5 թվանշան:

Ի՞նչ է լինում տասնորդական կոտորակը:

Քանի անգամ է փոքրանում տասնորդական կոտորակը, յեթե ստորակետը փոխազբեց ենք դեպի ձախ 1, 2, 3, 4, 5 թվանշան:

Գրալոր ցուց տվեք, թե աղյուսակի մեջ

Հանգույթի մակարդակը	Համարված առաջնային մակարդակը	Ստորական մակարդակը	Միավոր	Տառաշրջաբական մակարդակը	Համարված առաջնային մակարդակը	Տառաշրջաբական մակարդակը	Համարված առաջնային մակարդակը	Միավոր
7	0	3	6	,	2	,	2	
	7	0	3	,	6	2		
	7	0	,	3	6	2		
		7	,	0	3	6	2	
		0	,	7	0	3	6	2

Բանի անգամ և կոտորակը մեծ և IV-ից:

» » II » » V-ից:

» » III » » IV-ից:

» » I » » III-ից:

» » II » » IV-ից:

» » III » » V-ից:

Փռքսացնել 10 անգամ 30,31; 63,8; 134,05; 0,041; 0,0001; 8,089;  
 > 100 անգամ 461,5; 83,7; 9,082;  
 > 1000 անգամ 0,63; 1002,001; 1,45;  
 > 10000 անգամ 6345,045; 0,378; 4132,1;

Զեր կատարած աշխատանքներից ձևակերպեք և դրեցեք.  
 ա) Տասնորդական կոտորակները 10, 100, 1000... անգամ փոքրացնելու  
 համար ի՞նչ պետք է անել:

բ) Տասնորդական կոտորակները 10, 100, 1000, 10000... անգամ յե-  
 ծացնելու համար ի՞նչ պիտի անել:

Յեթե տասնորդական կոտորակի աջ կողմից զրոներ ավելացնենք, կո-  
 տորակի մեծությունը չի փոխվի.  $որինակ 4,3=4,30=4,300=4,3000$  և  
 այլը, վորովհետեւ առաջին կոտորակն ունի 4 ամբողջ 3 տասնորդական, յեր-  
 կը բարդն ունի 4 ամբողջ 3 տասնորդական, 0 հարյուրերորդական, չորբորդն  
 ունի 4 ամբողջ 3 տասնորդական, 0 հարյուրերորդ, 0 հազարերորդ և 0 տազա-  
 զաբերորդ. այսինքն, միմիանց հավասար են, վորովհետեւ եռոյնքան ամբողջ  
 ու կոտորակային մասեր ունեն:

Յեթե տասնորդական կոտորակի աջ կողմից զրոներ ավելացնելիս կո-  
 տորակի մեծությունը չի փոխվում, ուրեմն աջ կողմից զրոները ջնջելի են  
 կոտորակի մեծությունը չն փոխվի, այսպես.

$$\begin{aligned} 4,30000 &= 4,3 \quad 0,3014000 = 0,3014 \\ 0,000245000 &= 0,000245; \end{aligned}$$

Այս գործողությունը կոչվում է տասնորդական կոտորակների կրնա-  
 սում:

Կրճատել հետեւյալ տասնորդական կոտորակները.

$$2,1000, 0,0100, 13,230000, 43,516000000;$$

### ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ՉՈՐԾ ԴՈՒՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գումարում և հանում:

Տասնորդական կոտորակները գումարելու և հանելու համար տված  
 թվերն արտադրում ենք իրար տակ անպես, վոր տասնորդական մասերը  
 լինեն տասնորդական մասերի տակ, հարյուրերորդական մասերը՝ հարյուր-  
 երորդական մասերի տակ, հազարերորդական մասերը՝ հասարերորդական  
 մասերի տակ, ամբողջներն ել ամբողջների տակ և ապա կատարում ենք  
 գումարման կամ հանման գործողությունները,

$$\begin{array}{r} որինակ. 42,65 \\ + 3,405 \\ \hline 46,055 \end{array} \quad \begin{array}{r} 12,6823 \\ + 7,7395 \\ \hline 4,9428 \end{array}$$

$$\begin{array}{r} 3,7 \\ 0,0307 \\ + 11,114 \\ \hline 125,463086 \end{array} \quad \begin{array}{r} 1,07562 \\ - 0,34679 \\ \hline 0,72883 \end{array}$$

$$140,307786$$

Հանման ժամանակ կարող են պատահել նաև հետեւյալ դեպքերը.  
 1)  $15,78 - 5,39672$ , նախ արտադրում ենք նվազելին ( $15,78$ -ը), հետո  
 նրա տակը զրում ենք հանելին ( $5,39672$ -ը), առաջ նվազելիի աջ կողմից  
 ավելացնում ենք այնքան զրոներ, վոր նրա ստորակետից դեպի աջ գտն-  
 ված թվանշանների թիվը ևս հավասարվի հանելիի ստորակետից դեպի աջ  
 դառված թվանշանների թվին, այսպես

$$\begin{array}{r} 15,78'0'0'0' \\ 5,39672 \\ \hline 10,38328 \end{array}$$

2)  $3 - 1,3468$ : Արա հանման գործողությունն ել կատարում ենք  
 այսպես.

$$\begin{array}{r} 3,0'0'0'0' \\ 1,3468 \\ \hline 1,6532 \end{array}$$

Կատարել հետեւյալ վարժությունները ողտվելով վերի բացարու-  
 թյունից:

- 1)  $3,7 + 9,4$
- 2)  $3,12 + 095$
- 3)  $0,48 + 2,7 + 32,0044$
- 4)  $7,18 + 14,927 + 04031$
- 5)  $0,02 + 2,008 + 1,9 + 2,61085$
- 6)  $1,5 + 3,01 + 4,54 + 0,005 + 0,00009$
- 7)  $1 + 0,00007 + 8,59 + 4,10053$
- 8)  $5 + 9,602 + 34,04 + 0,089467$

- |                     |                       |
|---------------------|-----------------------|
| 1) $3,4 - 0,9$      | 6) $5 - 0,0004$       |
| 2) $4,1 - 2,81$     | 7) $1 - 0,9999$       |
| 3) $13,5 - 7,69$    | 8) $0,594 - 0,3897$   |
| 4) $6,3 - 0,0084$   | 9) $0,8004 - 059473$  |
| 5) $2,863 - 1,9756$ | 10) $100 - 99,000748$ |

Լուծել հետեւյալ խնդիրները

1917 թվին ոտար յերկրներից Ռուսաստան ներմուծվել և  $2316,7$  մի-  
 լիոն ոռուրլու ապրանք, իսկ արտահանվել և  $493,96$  միլիոն ոռուրլու ապ-  
 րանք: Ընդամենը 1917 թվին քանի միլիոնի ապրանք և ներմուծվել և ար-  
 տահանվել:

1918 թվին ներմուծվել և  $61,07$  միլիոն ոռուրլու ապրանք, արտահան-  
 վել և  $7,54$  միլիոն ոռուրլու ապրանք, ընդամենը վորքան և ներմուծվել և  
 արտածվել:

Գյուղացին տուաջին հողաբաժնից հավաքեց  $3,86$  տոնն, յերկրորդից  
 $4,7$  տոնն, իսկ յերրորդից  $1,625$  տոնն հացահատիկ: Ընդամենը վորքան  
 հացահատիկ հավաքեց գյուղացին իր հողերից:

Զբով լի շեշը կշռում է  $2,024$  կցր., դատարկ շին քաշը հավասար է  
 $1,184$  կցր., վճրքան և մաքուր ջրի քաշը:

100 տոպրակ ալյուրի քաշը 8,072 տոնն է, տոպրակների զուտ քաշն է 23,93 կցր., վճրքան է զուտ ալյուրի քաշը:

Պահատն ստացավ 4 տակառ նավթ, վորի ընդհանուր բրուտառ քաշն է 0,718 տոնն: Տակառների տարան 0,003 տոն է, գտնել նավթի նետառ քաշը

Լուծել հետեւյալ փակագծերով որինակները

$$1) 436 + 17,47 - (9,08 + 4,0047) =$$

$$2) 7,181 - 2,8973 + (27,04 - 19,278) =$$

$$\text{Պատ.} = 12,0457$$

$$3) 8,92 - 5,7834 + 10,74 + (1,814 - 0,926) =$$

$$\text{Պատ.} = 13,8636$$

$$4) 9,01 - [12,0198 - (23,51 - 18,66)]$$

$$\text{Պատ.} = 10$$

$$5) 2,9 - \{729,043 - [624,30081 + (235,16 - 131,90781)]\} =$$

$$\text{Պատ.} = 1,4$$

$$6) 44,83 - \{75,4 - [29,8 + (52,72 - 11,52)]\} =$$

$$\text{Պատ.} = 40,32$$

$$7) \{318,46 - [(61,52 + 426,3 + 3,14) - 278,89]\} = 1000$$

$$\text{Պատ.} = 706370$$

Փակագծերով որինակները լուծում ենք ալյուիս, նախ կատարում ենք փակագծերի միջի գործողությունները, ապա մյուս գործողությունները, իսկ լեռների մի քանի տեսակ փակագծեր են լինում, նախ կատարում ենք փոքր փակագծերի միջի գործողությունները, ապա միջակ փակագծերինը և հետո մեծ փակագծերինը:

Փակագծերը լինում են փոքր՝ ( ), միջակ կամ քառակուսի՝ ( ), մեծ կամ ձևավոր՝ ( ), Ուշադրությամբ հետևեցեք այս որինակի լուծմանը և վերևում գրված յոթ որինակները լուծեցեք ալյուիս.

$$15,8 - \{137,065 - [123,0234 + (18,3623 - 10,12)]\} =$$

$$1) \frac{18,3623}{10,12} - 2) \frac{123,0234}{8,2423} +$$

$$8,2423$$

$$3) \frac{137,0657}{131,2657} - 4) \frac{15,8}{5,8} -$$

$$5,8000 = 5,7$$

$$10,0 = 10$$

Այս այս 10-ը փակագծավոր որինակի պատասխանն է, վորը պիտի պրել այդ որինակի վերջում դրած հավասարության նշանից հետո, վորով կունենա՞ք.

$$15,8 - \{138,0657 - [123,0234 + (18,3623 - 10,12)]\} = 10,$$

### ՏԱՇՆԱՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱՆԵՐԻ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄԸ

Տասնորդական կոտորակները բազմապատկում ենք ամբողջ թվերի պես: Տված թվերն արտագրում ենք իրար տակ և ուշագրություն չդարձնելով ստորակետների վրա, բազմապատկում ենք իրեն ամբողջ թվեր, ապա աջ կողմից հաշվելով ստորակետով զատում ենք այնքան թվանշան, վորքան թվանշաններ կան ստորակետներից հետո բազմապատկում թվերի մեջ այսպես:

$$\frac{0,58}{32} \times \frac{45}{0,24}$$

$$\frac{116}{174} + \frac{180}{90} +$$

$$\frac{3,52}{12,316} \times \frac{0,453}{6,4}$$

$$\frac{2112}{352} + \frac{1812}{2718} +$$

$$43,35232$$

Կատարել բազմապատկան հետեւյալ գործողությունները

- |                |                  |
|----------------|------------------|
| 1) 3,4,2       | 11) 64,0,025     |
| 2) 0,75,3      | 12) 100,1,005    |
| 3) 4,08,1      | 13) 80,0,825     |
| 4) 0,125,8     | 14) 480,1,5625   |
| 5) 0,028,100   | 15) 0,84,09      |
| 6) 0,3205,1000 | 16) 4,75,6,08    |
| 7) 0,375,800   | 18) 8,675,4,008  |
| 8) 0,0048,75   | 18) 3,875,0,0408 |
| 9) 43,725,640  | 19) 0,0094,0,205 |
| 10) 8,4,25     | 20) 0,005,0,09   |

Այս որինակները մեկ մեկ արտագրում և բազմապատկում եք այնպես ինչպես ցույց է տված վերևու որինակներում:

Վորեւ թիվ տասնորդական կոտորակով բազմապատկելիս տեսնում եք վոր այդ թիվը փոքրանում եւ: Սա տեղի յեւ ունենում միայն այն ժամանակ, իերը տասնորդական կոտորակը ամբողջ չունի, որինակ.

$$\frac{25}{0,2} \times$$

$$5,0 = 5$$

Տեսնիւմ եք՝ 25 ամբողջ բազմապատկելով 0,1-ով ստացանք 5 ամբողջ, այսինքը 25 ը փոխանակ մեծանալու, փոքրացավ:

Յեթէ 25-ը բազմապատկեք 0,1 ով ավելի փոքր թիվ կստացվի. այսպէս.

$$\begin{array}{r} 25 \\ \times \\ 0,1 \\ \hline 2,5 \end{array}$$

Ստացաք 2,5 այսինքն 25-ը 0,1-ով բազմապատկելով, ստացաք 10 անգամ ավելի փոքր թիվ: Ասում ենք գտանք 24-ի 0,1 մասը: Իսկ յեթէ 25-ը բազմապատկում ենք 0,2-ով, գտնում ենք 25-ի 0,2 մասը նույն 25-ը 0,3 կամ 0,4 և այլ տասնորդական կոտորակի վրա բազմապատկելով, գտնում ենք 25-ի 0,3 մաս, 0,4 մասը և այլը:

Յեթէ 25-ը բազմապատկենք 0,12-ով կստանանք մի թիվ, վերը կլինի 25-ի 0,12 մասը. այսպէս

$$\begin{array}{r} 25 \\ \times \\ 0,12 \\ \hline 50 \\ 25 \\ \hline 3,00=3 \end{array}$$

3-ը կազմում ե 25 ի 0,12 մասը, այսինքն 25-ը 100 մասի յենք բաժանել և վերցրել 12 մասը:

0,1-ը 0,ո-ը 0,3-ը 0,12-ը 0,26-ը և այլ կոտորակները ամբողջներ չունեն և փոքր են մեկ ամբողջից: Այն կոտորակները վորոնք ամբողջից փոքր են, կոչվում են կանոնավոր կոտորակներ:

Ուրեմն վորեն թիվ բազմապատկելով կանոնավոր տասնորդական կոտորակով, գտնում ենք այդ թիվ մասը:

Այսպէս 184-ի 0,5 մասը գտնելու համար, պիտի ե 184-ը բազմապատկենք 0,5-ով:

$$\begin{array}{r} 184 \\ \times \\ 0,5 \\ \hline 92,9=90. \end{array}$$

Այսպիսով 92-ը 184-ի 0,5 մասն ե կամ կեսն ե:

Գտնել 396-ի 0,25 մասը  
կուծում.

$$\begin{array}{r} 396 \\ \times \\ 0,25 \\ \hline 1980 \\ 792 \\ \hline 89,00=89 \end{array}$$

Պահեք 1) 125-ի 0,8 մասը  
2) 489-ի 0,75 մասը  
3) 577-ի 0,425 մասը  
4) 1250-ի 0,048 մասը  
5) 6720-ի 0,375 մասը

6) 1,4-ի 0,5 մասը  
7) 13,75-ի 0,6 մասը  
8) 16,25-ի 0,08 մասը:  
9) 23,128-ի 0,75 մասը:  
10) 64,375-ի 2,256 մասը:

կուծեցեք հետևյալ խնդիրները:

1) Մեկ կելքում չուզուն արտադրելու համար հարկագոր նյութերից, 0,113 կց. հանքային փոշի և 0,716 կԵ. մոխրը և գուրս զալիս: 100 տոնն չուզուն արտադրելիս վնրքան փոշի ու մոխրի գուրս կզա:

2) Շոգեշարժ մեքենան բանեցնելու համար մի ժամանակաշրջան 12,75 կց, քարածուխ, ինչքան քարածուխ և պետք այդ մեքենան 3 որ անընդհատ աշխատեցնելու համար:

3) Ոլտապարիկի ծավալը 0<sup>0</sup>.ի ջերմության տակ հավասար և 6244,5 խորանարդ մետրի: Տաքություն ամեն մի աստիճանի բարձրանալու դեպքում մեծանում է այդ ծավալի 0,003366 մասի չափ: 25<sup>0</sup>-ի ջերմության դեպքում ինչպիսի ծավալ կունենա սդապարիկը:

4) Մեկսի յերկարությունը 10,65 մետր եւ Նրա լուրաքանչուր մետրը Ցելիսուխ չերմաշափով 10<sup>0</sup>-ի ջերմության տակ յերկարում է 0,000012 ու. ինչ յերկարություն կունենա այդ սելսը ամառվա 500<sup>0</sup>.ի ջերմաւթյան ժամանակ:

կուծել հետևյալ որինակները:

1) 2,3—155). (135,2—129,49)+4,084, (15—12,5) Պատ.=15:  
2) (12,1—1,0,6). (10—1,5)+(1,2—1,12). (3,1—1,85 Պատ.=13:  
3) (8,35—4,65). 5,8+(3,2+0,7). 4,0,1—(1,1+2,3—08). 2,1= Պատ.=31,639:

4) [(15—12,002+(21,3—8,92)—8,92)—(11,004—9,999)]. 10= Պատ.=143,73:

5) 248,2212—[(19,4+3,32). 6,21—(4,3—2,7+1,3). 0,3]= VI 1 II III IV V Պատ.=8:

Այս որինակները լուծելիս նախ պիտի ե արտագրեք, ապա առանձին չարցերով, նախ կատարեք փոքր փակագծերի միջի գործողությունները, հետո միջակ փակագծերի միջինը և ապա մյուս գործողությունները:

Փակագծերից դուրս գտնված գործողությունները կատարելիս պեռք ե կատարել նախ բազմապատկման և բաժանման գործողությունները: Բնդիսանը վեթե տված է մի որինակ, վորտեղ առանց փակագծերի կան միայն գումարման և հանման գործողություններ, այդ գործողությունները պիտի կատարել հերթով, համաձայն գրության կարգի, որինակ. 6,24+4,36—5,7+0,24=5,05:

1) 6,14   + 4,36	2) 10,5   — 5,7	3) 4,8   + 0,25
<hr/> 1050=10,5	<hr/> 4,8	<hr/> 5,05

Նմանապիս յեթե լինեն բաժանման և բազմապատկման գործողություններ, պիտի կատարել զրության կարգի համաձայն, որինակ 5,14,0,2,10 . 3: 100=0,003084:

1) 5,14   + 0,2	2) 1,028 : 10=0,1028	3) 0,1028   3
<hr/> 1,028	<hr/> 0,3084	<hr/>

4) 0,3084 : 100=0,003084:  
Բայց յեթե չորս գործողություններն ել որինակի միջ առանց փա-



դադերի տրված լինեն, նոխ պիտի կատարել բազմապատկման և բաժանման, ապա գումարման և հանման գործողությունները, որինակ.

$$0,35 + 8,14 \cdot 0,5 - 2,35 : 10 + 21,3,2 = 10,905$$

$$\begin{array}{r} 1) 8,14 \\ 2,5 \\ \hline 4,070 = 4,07 \end{array}$$

$$\begin{array}{r} 2) 2,35 : 10 = 0,235, \\ 3) 2,1 \\ 3,2 \\ \hline 6,72 \end{array}$$

$$\begin{array}{r} 4) 0,35 \\ 4,07 \\ \hline 4,42 \end{array}$$

$$\begin{array}{r} 5) 4,420 \\ 0,235 \\ \hline 4,185 \end{array}$$

$$\begin{array}{r} 6) 4,185 \\ 6,72 \\ \hline 10,905 \end{array}$$

Սակայն նույն որինակի գուծողությունները այլ ընթացքով կկատարվեն, ինթե գործածված լինեն նաև փակագծեր, որինակ.

$$[(0,35 + 8,14) \cdot 0,5 - (2,35 : 10 + 2,1)]. 3,2 = 6112$$

$$\begin{array}{r} 1) 0,35 \\ 8,14 \\ \hline 8,49 \end{array}$$

$$\begin{array}{r} 4) 8,49 \\ 0,5 \\ \hline 8,245 \end{array}$$

$$\begin{array}{r} 5) 4,245 \\ 2,335 \\ \hline 1,910 = 1,91 \end{array}$$

$$\begin{array}{r} 6) 1,91 \\ 3,2 \\ \hline 382 \end{array}$$

$$\begin{array}{r} 573 \\ \times \\ 6,112 \end{array}$$

Այս կանոնը նկատի առնելով, վերևում տրված փակագծերի գործողությունները պիտի կատարել հետեւյալ կարգով:

Յերրորդ որինակում. 1) կատարել I-ին փակագծի գումարման գործությունը, 2) կատարել II-րդ փակագծից գումարման գործողությունը, 3) կատարել III-րդ փակագծից գործողությունը, 4) I-ին փակագծի գործությունից ստացված թիվը բազմապատկել 5,8-ով 5) II-րդ փակագծից դաշտացված թիվը բազմապատկել 4-ով, 6) վերջի գործողությունից ստացված թիվը բազմապատկել 0,8-ով, 7) III-րդ փակագծից ստացված թիվը բազմապատկել 2,1-ով. 8) կատարել փակագծից գուրու գտնված գումարման գործողությունը, 9) կատարել փակագծից դուրս գտրված վերջին հանման գործողությունը:

Հինգերորդ որինակում գործողությունները պիտի կատարել այն կարգով, ինչպես նշված ե որինակի մեջ

### ՏԱՐԱԾՈՂԱԿԱՆ ԿՈՏՈՑԱԿՆԵՐԻ ԲԱԺՄԱՌԻՄՔ

Հինգեր տասնորդական կոտորակներն ինչպես եք փոքրացնում (բաժանում) 10, 100, 1000, 10000 և այլն անգամ:

Այժմ վերցրեք այլ որինակներ. Պեղպ. 12,9,2

Նախ պետք ե 12 ամբողջը բաժանեք յերկուսի վրա, ապա 8 տասնորդականը, այսպիս 12,8 | 2

$$\begin{array}{r} 12 \\ \hline 6,4 \end{array}$$

$$\begin{array}{r} նմանապիս 8,45:25 \cdot ի բաժանման գործողությունը կատարում է քնայնպես 84,5 | 25 \\ -75 | 3,38 \\ 95 | մնացողը -9 միավորի \\ -75 \\ 200 || մնացորդ = 20 տասնորդականի \\ -200 \\ 0 \end{array}$$

Նախ բաժանեցինք ամբողջը, վորից ստացանք 3 ամբողջ և 9 մնացորդ, ապա նրա կողքն իջեցնելով 5 տասնորդականը, գարձավ 95 տասնորդական, վորը բաժանելով 25-ի, վրա ստացանք 3 տասնորդական և 20 տասնորդական մնացորդ, 20 տասնորդականը գաճրինք 200 հարյուրերորդական, կողքին մի գերո ավելացնելով, այնուհետև բաժանեցինք ու ստացանք 8 հարյուրերորդական. որանով ել վերջացավ բաժանման գործողություն:

$$\begin{array}{r} նույն ձևով կատարելով 12,5 625 բաժանման \\ 1250 0,02 \\ 1200 \\ 0 \end{array}$$

Գործողությունը, տեսնում եք, վոր ամբողջը չբաժանվելու դեպքում, քանորդում գրում ենք 0 ամբողջ, ապա ամբողջը դարձնում ենք տասնորդական կոտորակ, վորը կլինի 120 տասնորդական, ունենք նաև 5 տասնորդական. առ յել չի բաժանվի 625-ի վրա, դրա համար ել կզրենք 0 տասնորդական, ապա կրկին մի զրո ավելացնելով, կստանանք 1250 հարյուրերորդական, բաժանելով կստանանք 2 հարյուրերորդական:

$$\begin{array}{r} Վերցնենք մի այլ որինակ. \\ Ա. Պեղպ. 15:0,4 = 150 | 4 \\ -12 | 37,5 \\ 30 \\ -28 \\ 20 \end{array}$$

Ինչպիս անոնում եք, այս որինակում աբողջը բաժանված ե կոտորակի վրա: Նախ բաժանման գործողություն կատարելով, ազատվեցինք բաժանմարի կոտորակից. դրա համար ել 0,4-ի փոխարեն գրեցինք 4 ամբողջ, այսինքն բաժանմարը մեծացը ինք 10 անգամ: Վորպեսզի քանորդը չփոխվի, բաժանելին ևս մեծացը ինք 10 անգամ և 15-ի փոխարեն գրեցինք 150:

Այսուհետև կատարեցինք բաժանման գործողությունը:

$$\begin{array}{r} Նմանապիս յեթե տված է 2,12:0,0016-ի \\ գրում ենք 012:0,0016 = 1200 | 16 \\ -112 | 75 \\ 80 \\ -80 \\ 0 \end{array}$$

Այս որինակում ևս տառաջին հերթին ազատվեցինք բաժանմարի կոտորակից վրա համար ել 0,0016-ի ստորակետը չորս թվանշան, դեպի աղտարանք, այսինքն տասն հազար բաժանմարին ևս մեծացը ինք տասն հազար ան-

զամ մեծացրինք. բանորդը չփոխելու համար բաժանելին ևս մեծացրինք.  
տաս հազար անգամ, վորով ստացանք 0,12-ի փոխարեն 1200, Այսուհետեւ  
կատարեցինք բաժանման գործողությունը:

Ճիշտ նույն ձևով ել կատարում ենք հետեւյալ որինակները:
$0,1715:3,43 = 17,15 \quad   \quad 353$
$1715 \quad   \quad 0,05$
$40 \quad   \quad 0,8$
$-40$
0

Այս լեռկու որինակներից հատկապես հետաքրքրիր են առաջինը: Այդ  
որինակում բաժանաբարն ու բաժանելին մեծացրինք 100 անգամ, վորովին  
առ 100 անգամ մեծացնելով արդեն ազատվեցինք բաժանաբարի կոտորա-  
կից: Բաժանման գործողությունը կատարելիս նախ 17 ամբողջը բաժանե-  
ցինք, չբաժանվեց, գրեցինք զրո ամբողջ, այնուհետև անմիջապես բաժանե-  
լիի տակը գրեցինք 171 այլինքն 17-ը գարձրինք տասնորդական մասեր և  
գումարեցինք լեզած մեկ տասնորդականը. սա լել չբաժանվեց, ցածրերենք  
նրա կողքը 4 հարյուրերորդականը և ստացանք 1715 հարյուրերորդական:  
Այսուհետև կատարեցինք բաժանման գործողությունը, ստացանք 8 հար-  
յուրերորդական:

Ուշադրությամբ հետեւյալով տասնորդական կոտորակների բաժանման  
գործողություններին, նկատում եք, վոր այդ գործողությունների ժա-  
մանակ տեղի յե ունենում լեռկու դեպք: առաջին լեռը բաժանաբարն ամ-  
բողողող թիվ ե, յերկորդ, յերր բաժանաբարը կոտորակ ե: Առաջին դեպ-  
քում նախ բաժանում ենք ամբողջները, յեթե բաժանվում են քանորդուա  
գրում ենք աքբողջ, իսկ յեթե չեն բաժանվում գարճնում ենք տասնորդական  
տակա: Հարյուրերորդական և այլ մասերու կատարում բաժանման գվարու-  
թությունը:

Յերկրորդ դեպքում, յերբ բաժանաբարը կոտորակ և, ազատվում ենք  
կոտորակից, վորով ստիպված ենք լինում մեծացնել 10, 100, 1000 և այլն  
անգամ. վորպեսզի քանորդը չփոխվի նույնքան անգամ ելք մեծացնում ենք  
բաժանելին և կատարում բաժանման գործողությունն այնպես, ինչպես ա-  
ռաջին դեպքում: Այլ խոսքով՝ յերկրորդ դեպքում բաժանման գործողու-  
թյունը կատարելու համար այդ դեպքը վեր ենք ածում առաջին դեպքի,  
վորով հեշտանում ե բաժանման գործողությունը:

Նկատի առնելով այս կանոնները, կատարեցիք հետեւյալ որինակները:

- |                  |                   |                      |
|------------------|-------------------|----------------------|
| 1) $6,48 : 2$    | 1) $18 : 0,9$     | 7) $143 : 0,026$     |
| 2) $0,4 : 8$     | 2) $126 : 0,35$   | 8) $17 : 0,0015$     |
| 3) $4,22 : 75$   | 3) $8 : 0,126$    | 9) $3,225 : 0,11$    |
| 4) $0,25 : 16$   | 4) $7,2 : 0,8$    | 10) $2,1296 : 0,242$ |
| 5) $0,06 : 15$   | 5) $3,75 : 0,16$  | 11) $64 : 0,0625$    |
| 6) $10,05 : 125$ | 6) $0,18 : 0,000$ | 12) $0,69 : 0,138$   |

Կատարել նաև հետեւյալ փակագծերով որինակները.

- 1)  $(7,15 : 1,4 + 0,5) \cdot (10,2 - 0,7 : 5,5 \quad \Psi_{առ.} = 56,$
- 2)  $(457 : 8 + 3,4) : [(3,58 - 0,88) : 8] \quad \Psi_{առ.} = 67,25,$
- 3)  $(2,5 + 4,04) \cdot (0,33 : 0,2) \quad 2,4 \cdot 1,5$



ՀՀ Ազգային գրադարան



NL0257183

